



ԿԱՐԱՊԵՏ ԱԴԱՍԵԱՆ

(1873 - 1947)

Էտիկար Շահինի դադաղին հետեւեցաւ քանի մը ամիս յետոյ Կարապետ Աղամեան, երկու սրտակից բարեկամներ որոնք իրենց ծերութիւնը կը մխիթարէին իրարու այցելելով, մինչեւ որ վերջին տարիները Աղամեան այլեւս անկարող շարժելու, կը սպասէր իր սիրելի բարեկամին եւ թան-

կաղին արուեստակիցին՝ Փարիզի հեռաւոր թաղի մը մէջ համեստ տան մը մտերիմ յարկին տակ անցեալ յուշերով ապրելու։ Կ. Աղամեան ծնած է Կ. Պոլիս 1873ին, եւ իր ուսումները կատարած է Վենետիկ Մուրատ-Ռափայէլեանի մէջ՝ ուր նկարչութեան վարպետ ուսուցիչ ունեցած է Բաուլէթին։ Իր աշակերտութենէն ցոյց կու տար արտաքոյ կարգի սէր եւ ընդունակութիւն նկարչութեան, եւ դաստիարակ հայրերը զինքը կը քաջալերեն ամէն միջոց տրամադրելով որ երիտասարդ Աղամեան

ստանայ խնամուած դաստիարակութեան հետ՝ նկարչութեան հաստատուն հիմերը։

Սկիզբները նա կը հետեւի իտալական դպրոցին եւ կեանքը շահելու համար կը ստիպուի նկարադարձել վէպեր եւ պարբերականներ։ Իր գեղեցիկ հեղինակութիւններն են Պոմպէի վերջին օրերը վէպին նկարները։

Փոխադրուելով Փարիզ, Աղամեան կը նուիրուի հոգիով նկարչութեան։ Պահելով հանդերձ իտալական դպրոցին ազդեցութիւնը, դոյներու եւ լոյսի դրացողութեան մէջ բոլորովին կը սկսի հետեւիլ Փրանսական արդի նկարչութեան։

Բացի քանի մը նկարներէն, որոնք կը ներկայացնեն նախորդ պատերազմէն ռազմաշունչ դրուագներ՝ Մեռելներ ոտքի, Դէպի յաղթանակ (նուիրուած Կիլիկեան կամաւորներուն), Դէպի Բերոն, Փանդըւած օմալսը եւ այլն, Աղամեան իր նկարչութեան նիւթ ընտրած է ծովափներու հմայիչ գեղեցկութիւնը։

Երբ օր մը իրեն հարցուցի թէ, ո՞րն է ձեր հոգին թրթռացնող գեղեցկութիւնը — ես, ըսաւ — «Լոյսը կ'երգեմ եւ լոյսին համար կ'ապրիմ»։ Իրաւցնէ կարելի է զինքը կոչել Լոյսի նկարիչ։ Լոյս փնտռած է թափանցիկ ալիքներուն մէջ, լոյս մարդարտեայ աւաղին վրայ, լոյս բաղնեւորներու թեթեւ հանդերձանքներուն վրայ։ Միեւնոյն ժամանակ նա երգել կու տայ նաեւ դոյներուն. օրուան ամէն մէկ ժամուն՝ իրերը յուրիչ երանդներ կը ստանան մանաւանդ ծովափներու վրայ, եւ Աղամեան զգայուն հուշով կրցած է պատկերացնել այդ խուսափուկ ժամերը։

Թերեւս ոմանք ուզեն միօրինակութիւն տեսնել լոյս այնքան յաճախուած եւ կարծես հազար անգամ կրկնուած նիւթերուն մէջ. բայց ըստ իս նուրբ բանաստեղծութեան մը էջերն են, որոնք ընթերցողին անզգալաբար կը ներշնչեն հոգեկան հեշտանք մը, ինչպէս բոյրը կը ծորի մեղմ-

օրէն զանազան դոյներով վարդի փունջէ մը։

Ամէն նկարիչ լոյս եւ հորիզոն կը փնտռէ իր ստեղծագործութեան մէջ եւ շատ քիչեր են որ կրցած են այդ աստուածային «Եղիցի»ին հասնիլ։ Աղամեան անտարակոյս անմահ պիտի մնայ միջազգային նկարչութեան մէջ իր այդ ստեղծագործ տաղանդով։

Այնքան խոր անձնականութիւն դրած է իր նկարներուն մէջ՝ որ կարելի է հազարաւորներու մէջ իր հեղինակութիւնը դատել առանց դժուարութեան։ Իր պատաստները իրենն են առանց ազդեցութեան, ինքն է որ առանց մէջ կ'ապրի հոգեկան նուրբ զգացողութեամբ ինչպէս՝ Պեթովէն իր համերգներուն մէջ, կամ Մեծարենց մը իր հոգեպարար քնարերգութիւններուն մէջ։


Երբ ըսի թէ նա դոյներու երգիչ մ'է, իրաւունք ունիմ, քանի որ ինքն իսկ ինծի ըսած է թէ «Եթէ նկարիչ չըլլայի՝ երաժիշտ պիտի ըլլայի»։ Երկու գեղարուեստներ՝ որոնք անբաժան քոյրեր են եւ իրար լրացնող տարրեր մեր գերբնական կեանքին մէջ եւ Աղամեան շատ աւելի օժտուած էր այդ երկու աստուածուհիներու շնորհներով։

Իր վրձինին լաւագոյն արժանիքներէն են նաեւ ժուժկալութիւնը, հաւասարակը՝ ուրթիւնը եւ հարուածներու հաստատուն նկարադրելը եւ մանաւանդ դոյներու ներդաշնակութիւնը՝ որոնք կը խօսին առանց աղմուկի, կ'երգեն առանց պոռալու, կը ներկայացնեն առանց աւելորդ պշրանքներու։

Արդէն ինքն ալ նկարադրով հանդարտ եւ հեղաբարոյ անձնաւորութիւն մ'էր, մարմնացումը իր նկարներուն՝ որոնք այնքան հարազատօրէն պատկերացուցած են այն նուրբ, զգայուն ազնուական հոգին որ ծածկուած էր իր սրտին մէջ։

Այս տարի 30 Յուլիսին, երբ զայն մայր հոգին յանձնեցինք, քանի մը բարեկամներ

րովհէլ իր սգաւոր զաւակներուն արցունքներուն մէջ, չէինք սպասեր որ Փարիզի հայութիւնը այնքան հեռու մնար այս պատուարեր Հայուն արժանի յարգանք ընծայելու իր մահուան շնորհիւ առջեւ. այնուհանդերձ Կարապետ Աղամեան կը մնայ մեր եւ միջազգային նկարչութեան մէջ սիրելի եւ անմոռանալի դէմք մը:



ՀԱՅԿ ԵՐԶՆՆԿԱՑԵԱՆ

1943 Յունիս 4ին Ատտիս-Ապեպայի մէջ աւազակներու յարձակումի մը զոհ կ'երթայ խոտովաւորեց երիտասարդ՝ Հայկ Երզնկացեան, վերջին յոյսը եղբարարիտ ծնողքին:

Երզնկացեան իր բարեհամբոյր բնաւորութեամբ եւ մանաւանդ իր տաղանդին շնորհիւ մեծ համակրանք ու սէր կը վայելէր ոչ միայն Հայ համայնքին՝ այլ եւ

օտարներէն՝ ու պետական ներկայացուցիչներէն:

Ինքնաբոյս տաղանդ մ'էր այդ հեռաւոր ամբիկեան անկիւնը, նուիրուած բոլորովին նկարչութեան եւ իր աշխատանքով յառաջացած մուսաններու շնորհքին մէջ:

Վայրենի երեւակայութեամբ օժտուած՝ կը սիրէր նկարել այն ինչ որ փայլակի ազդեցութիւն կ'ընէ տեսողին վրայ: Իր նախասիրած նիւթերն էին Հաշիշամուներ, Հապէշներ, Կեանքի արիւնոտ պայքարներ, Մահուան տեսիլներ, Կենդանիներու արշաւաւներ, Պառաւ վիռուկներ: Ուժեղ են իր վրձինի հարուածները, անխոհեմ յանդգնութեան հասնելու աստիճան. կը սիրէր իր պատառներուն վրայ երանդներու ալիքներ յօրինել որ կարենային ճշգրտորէն պատկերացնել իր ընտրած նիւթերը:

Հակառակ որ մեղմ էր բնաւորութեամբ, բայց իր սրտին մէջ երիտասարդական խանդը վառ էր և կընամ ըսել փոթորկալից. ինքը չէ խնայած ամբողջ զգացումները հարազատօրէն ներկայացնել իր դիտողներուն. ուղեր է ըսել ինչ որ թաղուն կար սրտին մէջ խանդաւառ պարզմտութեամբ:

Թէպէտ տկար էր անդամազննութեան մէջ, սակայն գոյներու ներդաշնակութեամբ, եւ մանաւանդ կիսալոյսերու եւ ստուերներու գեղեցիկ հակադրութիւններով կը ստանայ այնպիսի արդիւնքներ՝ որոնք որոշակի ցոյց կու տան թէ այս տարաբախտ երիտասարդը արժանի էր. երկար ապրելու՝ լաւագոյն յաղթանակներ տանելու համար:

Ատտիս-Ապեպայի պայմանները թոյլ չեն տուած որ Երզնկացեան կարենար գեղարուեստի հետեւիլ վարպետի մը քով: Ծամբորդած է Եւրոպա՝ քիչ ժամանակի համար եւ հազիւ կրցած է տեսնել եւ ուսումնասիրել Լուվրի հրաշակերտները՝ որոնք անելի իր խանդը բորբոքած են քան



ՀԱՅԿ ԵՐԶՆՆԿԱՑԵԱՆ. Կեանքի պայքարը

Թէ դպրոցի մը դերը կատարած: Բայց նա անխոնջ աշխատող մ'էր, եւ մտած արդէն վերելքի ճամբուն մէջ, ստեղծելով իր անձնականութեամբ տեղական գոյնով գործեր՝

Զ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆԻՆ

Ձիւնասպիտակ աղանի
Կը թռչնորիս մէջըս յար,
Երազներուս անկամար
Ծաղկաշխարհին մէջ յուր
Կ'արձագանգես անդադար:
Սարսուռներու մէջ ճերմակ,
Ես դէմ առ դէմ քեզի հետ
Լուսատարած էջերէդ
Յագուրդ կու տամ իմ անյադ
Խոր ծարաւին խընկաւէտ:
Ծաղկառայիլդ մէջ ծըփուն,
Քու լուսաշող ապրումին
Աստեղաշար ու անդին
Բոցերուն տակը նըկուն՝
Կը մոխրանամ կը հալիմ:

Ու այդպիսով ալքերու
Բոցերգութեան պէս աղուոր՝
Կը ծընի սէր մը անլուր
Աղօթասաց քուրմերու
Պէս ծընրադրել քեզ համար:
Անմար կանթեղ Վարուժան
Յիսուսի պէս կարճ կեանքով,
Չարչարանքի անյայտ ծով
Բայց արժանի յարութեան
Յիշատակիդ խարոյկով:
Մաղդաղինէն թող ըլլամ
Խաչելութեանդ առջեւ,
Ու իմ մըտքիս հոլաթեւ
Նախըզացման հաւատամ
«Վերապրումիդ» Հայ Արեւ:

ՆԱԶԵՆԻ ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ